# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-5772/25
*19 նոյեմբեր 2025թ.*

**«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ » ՍՊԸ**

**ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի կողմից հայտարարված «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/7» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ն,որի հետ կնքվել է պայմանագիր 307202868/երեք հարյուր յոթ միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Պայմանագրի վերջնաժամկետ է սահմանվել 01/11/2024թ,սակայն, սահմանված ժամկետում կապալառու կազմակերպությունը՝ «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ն, չի ավարտել աշխատանքները և չի վերացրել կատարված աշխատանքներում պատասխանատու ստորաբաժանման կողմից հայտնաբերված թերությունները, ստորաբաժանման կողմից տրված ժամկետում,ինչպես նաև տվյալ աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության՝ «ՎԱՆՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտնաբերված թերությունները/կցվում են/:

Հայտնում ենք, պայմանագրի կողմ հանդրսացող «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ն խախտել է «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/7» ծածկագրով պայմանագրի 3.1.4 կետի բ/ և գ/ ենթակետերը, որի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե.

բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետները.

գ/ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծա-նախահաշվային փաստաթղթերով սահմանված պայմաններին.

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում/ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունը,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարը/:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պատվիրատուի՝ Ալավերդու համայնքապետարան, պատճառաբանված որոշմամբ Ձեր կազմակերպությունն ընդգրկվելու է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և պայմանգրի ու որակավորման ապահովման երաշխիքները ներկայացվելու են համապատասխան առևտրային բանկ՝ գանձումներ կատարելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Պատվիրատուի 900265121104 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին: Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Պատվիրատուի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին: Նշված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը:

Առդիր՝ էլ. նյութ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

*Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Քառյան*